

206. ԱՆՀՅՈՒՐԱՍԵՐ ՀԵՐ ՈՒ ՏՂԱՆ ԵՎ ԽՈՐԱՄԱՆԿ ՀՅՈՒՐԸ

Մի անհյուրընկալ մարդու մոտ մի խորամանկ հյուր կգա, մեկ-երկու օր մարդն ու իր տղան կհամբերեն, մի օր էլ մի ընդհանուր ամանում, որից ճաշում էին հայրն ու որդին և հյուրը, որդին հոր խրատով մեկ գթալ կուտի և կասի.—Վայ, էնքան կերա, դանա դառա։ Հայրն էլ երկու գդալ կուտի ու կասի.—Որդի, ես էլ էնքան կերա, տր ես դառա։ Խորամանկ հյուրը իսկույն կիմանա բանի էությունը և առանց ուտելը դադարեցնելու կասի.—Ես էլ էնքան պիտի ուտեմ, որ համ ես ճաքի, համ՝ դանան։